ՍՐԲԱԶԱՆ ՏԵԱՌՆ

Տ· ՄԵՐՈՑ ԼԵԻՈՆԻ ԺԳ·

ՓԱՀԱՆԱՑԱԳԵՏԻ

Թուղթ շրջաբերական

Առ Պատրիարգունս, Նախագահ Արքեպիսկոպոսունս, Արքեպիսկոպոսունս և ամենայն Եպիսկոպոսունս հաւօրէն կաթողիկէ աշխարհի, որք ունին զլնորհս և զիշողորդութիւն ընդ առաքելական աթոռոյն։

Ժամանակիս ոգւոյ և դիպաց գլխաւորն և պետութեանց, մանաւանդ ոմանց՝ հոգը մեծապէս գրաւողն՝ կըրնայ ըսուիլ այն գաղտնագործ մարդկան բանսարկութիւնն և ձեռնարկութիւնն, որք կը դարանին ընչից և՛ կենաց աւագ կամ իշխանաւոր անձանց, և յանդուգն ու ամզարիչ գրուածներով ալ իրենց դիտմունքը կը ծածկեն. որոց դէմ՝ի հարկէ չատ ուղղախոհ գրուածներ ալ կ՝ելլեն։ Բայց մեզ ամենէն աւելի խոհական, պատշաճաւելի և ընդունելի եղաւ՝ ամենէն բարձր տեղէ և անձէ եկած հետևեալ գրուածն, զոր և ամենայն պետութեանց գլուխքն չնորհակալութեամբ ընդունեցան, և արժանաւոր համբոյրեան այնպիսի հեղինակի և այսպիսի դիպուածոց. որոյ համար պատշաճ դատեցանք մենք ալ թարգմանելով՝ի բնագրէն՝ հրատարակել։

Եղբարք Պատուականք, ողջոյն և օրհնութիւն առաքելական։

Մեր Փրկանայապետութեան սկիզբէն՝ի վեր, ինչպէս որ առաքելական պաշտամանն պարտքը կը պահանջէր, ամենեին չդադարեցանք, եղբարք պատուականք, առ Ձեզ ուղղեալ ընդհանրական թղթով ծանուցանելու այն ժանտաբեր հիւանդութիւնն որ մարդկային ընկերութեան երակներուն մէջ կը պտըտի, և ամենամեծ վտանգի մէջ կը դնէ զայն. միանգամայն ցուցինք զօրաւոր դեղերն ալ որոնցմով կարելի է դարձեալ առողջութեան մէջ վերահաստատուիլ և մեծապատիւ ամենամեծ վտանգէն ազատիլ։ Սակայն մեր այն ժամանակին ողբացած չարիքն քիչ առեղի մէջ այնպէս զայրացան՝ որ կրկին կը փութանք մեր խօսքն առ Ձեզ ուղղել, ինչպէս որ Մարգարէն ալ կարծես մեր ականջին մէջ կը հնչեցընէ. Գոչեա զօրութեամբ և մի խնայեսցես, բարձրացո իբրև զփոդոզ զբարբառ քո[1]։ Զայնամապէս կը տեսնենք, եղբարք պատուականք, որ մեր խօսքն մարդկանց այն մոլորութեան վրայ է, որոնք զանազան և դրեթէ բարբարոսական անուամբք՝

1 Եսայ. ԾԸ. 1։

digitised by A.R.A.R.@

ընկերավարք (Socialista), Հաղորավարք (Comunista) և Ոչնչականք (Nihilista) կը կոչուին. որոնց իւրաքանչիւրն քոլոր աշխարհք տարածուելով, և ապօրինաւոր դաշամբք հաստատուելով իրարու հետ միաբանելով, ալ ծածուկ ժողովականերու խաւարային դումարումներ չեն փնտռեր, այլ յայտնապէս և համարձակ լուսոյ մէջ չրջելով՝ որ և իցէ քաղաքակիրթ ընկերութեան հիմունքը տապալելու կանխաւ վճռած խորհուրդին կը ջանան ի գործ դնել։ Ասոնք են անտարակոյս որ աստուածային գրոց վկայութեանն համեմատ զվարմին պղծեն, զտէրութիւնս քամահեն, զիւառուն հայհոյեն [1]։ կենաց հանգստութեան և վայելչութեան համար իմաստութեամբ սահմանեալ մարդկային և աստուածային օրինացմէ բան մ՚անարատ կամ ամբողջ չեն թողուր։ Գերագոյն իշխանութեանց՝ որոնց ամենայն անձն ըստ Պօղոսի խրատուն՝ պէտք է հպատակի, հրամայելու իրաւունք ստացած ըլլալնուն համար Աստուծմէ, չեն հնազանդիր, և ամեն մարդկանց իրաւանց և պաշտամանց կատարեալ հաւասարութիւն կը քարոզեն։ — Ան և կնոջ բնական միաւորութիւնն, որ և կռապաշտից և բարբարոսաց իսկ սրբազան է, կը նուաստացընեն, և անոր կապն՝ որով դէխաւորապէս ընտանեկան ընկերութիւնն կը պահպանուի՝ կը լուծեն, կամ թոյլ կու տան ցոփութեանց։ — Վերջապէս երկրաւոր ընչից ցանկութենէն դրդռեալ, ոչ է արմատ ամենայնի չարեաց, ոչ ոսկի տալով ցանկացեալ՝ վրիպեցան ի հաւատոյն [2], բնական օրինաց հաստատեալ սեպհականութեան իրաւանց դէմ կը հակառակին և անդուլ ձեռնարկութեամբ մը ամեն մարդու կարողութիւնը հոդալ կամ փոփոքնին կատարել կեղծելով, իւրաքանչիւրին թէ օրինաւոր ժառանգութեամբ ըլլայ, թէ հանճարոյ և ձեռաց աշխատութեամբ կամ կերակրոյ խնայողութեամբ չահածք՝ յափշտակել և հասարակաց ընել կը ջանան։ Դէպ իրենց այս տարօրինակ մտածութիւնը ժողովներնուն մէջ կը հրատարակեն, մելոր գրոց ձեռքով համաղողական կ՚ընեն, և լրագրօք հեղեղաբար ռամկին մէջ կը սփռեն։ Որով հետևաբար թագաւորաց մեծարոյ պատիւն և իշխանութիւնն այն աստիճան մոլորամիտ ռամկին նախանձուն նպատակ եղաւ՝ որ ամենայն անձի անհնազանդ ոճրագործ դաւաճանք զանազան անգամ քիչ ժամանակի մէջ, վեհապետաց վրայ դարձուցին իրենց ղէնքը։

Իսկ այս անզգամ մարդոց յանդգնութիւնն, որ օրէ օր քաղաքային ընկերութեան մեծ կործանումն կը սպառնայ, և ամենուն ոգին ահուդողով կը պատէ, իրեն պատճառն և ակիզբն այն խոնաւոր վարդապետութեանց մէջ ունի, որ երբեմն ապականաբար սերման մը պէս ժողովրդեան մէջ սփռուելով, աստենին իրենց այսպիսի ժանտալից պտուղը տուին։ Վասն զի աղեկ գիտէք, եղբարք պատուականք, որ ԺԹ դարեն ի վեր կաթողիկէ կրօնից դէմ Նորադանիելեն դրգռուած պատերազմն, որ և մինչև մեր օրերն երթալով զայրացաւ, իրեն նպատակ դրած է ամենայն աստուածային յայտնութիւն մերժել, և որ և իցէ դերբնական կարգ հիմն ի վեր ընելով միայն բանին հնարից՝ կամ լաւ եա՝ ցնորից ասպարէզ չնորհել։

1 Յուդ. 8։ 2 Ա. Տիմ. Զ. 10։

digitised by A.R.A.R.@

Ա.յսպիսի մոլորութիւն մը, որ յանիրաւի գրանն իրեն անուն կ'առնու, մարդկային բնութեան տնկակից իշխանասիրութեան փափաքը սրելով և ամեն տեսակ ցանկութեանց սանձերն արձակելով, ոչ միայն չատերու միտքն, այլ նաև քաղաքային ընկերութիւնը համաստաբած գրաւեց։ Ա.յսպէս հեթանոսաց իսկ անլուր նորօրինակ ամպարշտութեամբ առանց Աստուծոյ և իրեն դրած օրինաց՝ վարչութիւններ կազմուեցան. ըստեցաւ թէ հասարակաց իշխանութիւնն, և անոր սկզբնաւորութիւնն, պատիւն և հրամայելու զօրութիւնն՝ Աստուծմէ տրուած չէ, այլ ժողովրդոց կամքէն. որ իրենք զիրենք ամեն աստուածային պատուէրներէ ազատ համարելով՝ միայն այն օրինաց ուզեցին հպատակիլ զորոնք իրենք ըստ հաճոյից օրինադրեր էին։ — Հաւատոյ գերբնական ճշմարտութեանց իբրև թշնամեաց բանին հակառակելով և մերժելով, ինչն ինքն մարդկային ազգին հեղինակն և փրկիչն՝ համայնարարաց, լիկէոնաց և վարժատանց ումանց մէջէն և մարդկային կենաց ամեն հասարակաց ժողովներէն հետզհետէ և քիչ քիչ հալածել կը մտածեն։ — վերջապէս հանդերձեալ և յաւիտենական կենաց վարձքն և պատիժներն՝ ի մոռացութեան թողուլով, երկնանկութեան կենդանի փափաքն ներկայ կենաց մէջ սահմանաւորեցաւ։ Ա.յս վարդապետութիւններս ամեն տեղ տարածուելով, և մտածելու ու գործելու այնչափ ազատութիւնն ընդհանուր ըլլալով, զարմանք չէ որ ատորին վիճակի մարդիկ իրենց ազգատին տնակէն և կրպակէն ձանձրացած՝ հարուստներու պալատներն և ատաղուածքը կ'ուզեն գրաւել։ զարմանք չէ թէ ալ ոչ հասարակաց և ոչ առանձնական կենաց հանգստութիւն մնացեր է, և մարդկութիւնն գրեթէ յետին վտանգի հասեր է։

Սակայն եկեղեցւոյ գերագոյն Հովիւներն, որոնց յանձնուած է տէրունական հօտին՝ թշնամեաց յարձակմանց դէմ պաշտպանելու հոգն, չանացին շուտով իմացընել վտանգն և հաւատացելոց փրկութեան խնամք ունենալ։ վասն զի հազիւ թէ սկսան գաղտնի ընկերութիւնք ձևանալ, որոնք այն ժամանակէն իրենց մէջ մեր յիշած մոլորութեանց սերմնիքը կը տնուցանէին, Հռովմայ Քահանայապետն կղեմէս ԺԴ և Բենեդիկտոս ԺԴ անփոյթ չեղան մոլորամտաց ամպարիշտ խորհուրդները ծանուցանելու և գաղտնապէս սպրդող վտանգ դէմ բոլոր աշխարհի հաւատացեալները խրատելու։ Բայց որովհետև փիլիսոփայից առումն պարծող անձինք՝ մարդկանց անսահման ազատութիւն մը ընծրհեցին, և քանական ու աստուածային օրինաց դէմ՝ նոր օրինադրութիւն մը, ինչպէս որ կ'անուանուն, հնարել և հաստատել սկսան, բարեյիշատակ Քահանայապետն Պիոս Ը իսկոյն ընդհանրական թղթերով անոնց վարդապետութեանց անօրէն ոգին և մոլորականութիւնը հակըցուց. միանգամայն առաքելական նախատեսութեամբ դուշակեց ռամկին դժբաղդաբար խաբուելով՝ ի կործանումն դիմելը։ Բայց գեռ զօրաւորագոյն դեղերն՝ ի գործ դրուած չըլլալով որպէս զի այն վարդապետութեանց ծուռ սկզբունքն աւելի ևս ժողովրդոց մէջ չտարածուին և իբրև օրէնք՝ ի վարչութեանց յայտնապէս ընդունելի չըլլան՝ Պիոս Է և Լևոն ԺԳ քահանայապետներն նզովեցին դաղտնի ազանդներն. և գարձեալ անոնցմէ պատճառեալ վտանգն իմացուցին ժողովրդեան։ ի վերջոյ՝ յայտնի է ամենուն ինչպիսի զօրաւոր բանիւք և ինչպիսի ոգւոյ հաստատութեամբ և երկայնմտութեամբ մեր

digitised by A.R.A.R.@

փառաւոր Նախորդն Պիոս Թ ԶԵ ըրած Բանախօսութեանց մէջ, և Թէ աշխարհ-քիս առ ամենայն եպիսկոպոսունս ուղղած ընդհանրական կոնդակներով, աղաղ-նեբուն անօրէն Ջանից և մանաւանդ անոնցմէ ծագած ընկերավարութեան ժանտախտին դէմ պատերազմեցաւ։

Յաւելի է որ անոնք ալ որոնց յանձնուած է հասարակաց բարին՝ ամպա-րիշտ մարդկանց խաբէութիւններէն զգուշացած և սպառնալիքով վախցած՝ կը կասկածին և նաև կ՚անհրաւին ընդդէմ եկեղեցւոյ, չհակառակելով որ աղանդոց Ջանքն ընդունայն կ՚ըլլային՝ եթէ իշխանք և ժողովուրդք կաթողիկէ եկեղեցւոյ վարդապետութեան և Հռովմայ գահանայապետաց իշխանութեան պատիւը միշտ ըստ պատշաճի պահէին։ Եւ որովհետև եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ՝ սիւն է և հաստատութիւն ձշմարտութեան [1], այնպիսի վարդապետութիւններ և օ-րէնք կը դնէ, որոնցմով ընկերութեան ապահովութիւնն և հանգստութիւնն ա-ւելնաբար կը խնամուի, և ընկերավարաց ժանտ ընձիւղն արմատաքի կը խլուի։

Սակայն Թէպետև ընկերավարք Աւետարանով զեղծանելով՝ զանզգոյշները դիւրաւ խաբելու համար զայն իրենց կամաց համաձայնեցընել կ՚ուզեն, այլ ամենամեծ է ընդ մէջ իրենց Թիւր ուսման և Քրիստոսի ամբիծ վարդապե-տութեան եղած անհամաձայնութիւնն. քանզի զի՛նչ հաղորդութիւն է արդա-րութեան ընդ անօրէնութեան, և կամ զի՛նչ հաւատարութիւն է լուսոյ ընդ խաւարի [2]։ Արդարև ասոնք՝ ինչպէս ըսինք, չեն դադարիր քարոզելէն Թէ՝ ի բնէ մարդիկ մէկմէկու հաւասար են. ուստի կը պնդեն՝ Թէ պէտք չէ ոչ պատուել և ոչ յարգել զիշխանութիւն. և այն օրինաց միայն հնազանդելու է՝ զորս ըստ դիպաց և ըստ քմայ իւրեանց կը հաստատեն։ Ընդ հակառակն, ըստ աւետարա-նական վարդապետութեան յայս հաստատեալ է մարդուս հաւասարութիւնն, Թէ ամենքն մի և նոյն բնութեան վիճակելով, մի և նոյն Աստուծոյ որդիութեան ա-ժառնարարձր աստիճանին կոչուած են. և ամենուն վախճանն ալ մէկ ըլլալով, ի-րաքանչիւր ոք նոյն օրինօք պիտի դատուի՝ յետոյ ըստ արժանեաց վարձուց կամ պատժոց արժանանալու համար։ Իսկ իրաւանց և իշխանութեան անհաւասարու-թիւնն բնութեան Արարչէն ինքնին կը ծագի, ուստի ամենայն ևս հաւասարու-թիւն յերկինս և յերկրի անուանի [3]։ Իշխանաց և հպատակաց ոգիքն ալ ըստ ուղղափառ վարդապետութեան և օրինաց՝ այնպէս կապակցեալ են մէկմէկու հետ, որ Թէ հրամայելու ցանկութիւնն կը չափաւորուի և Թէ հնազանդելն դիւ-րին, հաստատուն և ազնուագոյն կը դառնայ։

Ըստ այմ՝ եկեղեցին առ ամենայն հպատակս անդադար Աւետելոյն խրատը կը կրկնէ. Ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ. և որ ևեմ՝ յԱստուծոյ կայգեալ են։ Այսուհետև որ հակառակ կայ իշխանութեանն, Աստուծոյ հրա-մանին հակառակ կայ. և որք հակառակն կան, անձանց դատաստանաւ ընդ-ունին [4]. և զարձեալ կը պատուիրէ հնազանդ լինել, ոչ միայն վասն բար-կոտութեանն, այլ և վասն խղճի մտացն. և հատուցանել ամենեցուն զպարտս; որում զհարկ՝ զհարկն, որում զմաքս՝ զմաքսն, որում զերկիւղ՝ զերկիւղն,

1 Ա. Տիմ. Գ. 15։ 2 Բ. Կոր. Զ. 14։ 3 Եփ. Գ. 15։ 4 Հռովմ. ԺԳ. 1-3։

digitised by A.R.A.R.@

որում զպատիւ՝ զպատիւն [1]։ Վասն դի ամէն բանի Յաեղծողն և Վարիչն իր կանխատես իմաստութեամբն կարգադրեց որ ստորնագոյնք միշնովք և միջինք բարձրագունովք ամէնքն իրենց վախճանին հասնին։

Արդ ինչպէս որ երկնաւոր թագաւորութեան մէջ ուղեց որ զանազան դասք ըլլան հրեշտակաց, և ամենք այլոց հպատակին, և ինչպէս որ նաև եկեղեցւոյ մէջ կարգաց աստիճանաւորութիւն և պաշտամանց զանազանութիւն հաստատեց, այնպէս որ չըլլան ամէնքն Առաքեալք, ոչ ամէնքն վարդապետք, ոչ ամէնքն Հովիւք, այսպէս ալ քաղաքային ընկերութեան մէջ օրոշեց որ չատ դասակարգութիւնք ըլլան՝ պատուով, իրաւամբք և կարողութեամբ զանազանք. որով քաղաքականութիւնն ալ եկեղեցւոյ պէս՝ ըլլայ մէկ մարմին, սակայն չատ անդամներէ բաղկացեալ. ոմանք աղնուագոյնք քան զայլս, բայց ամէնքն ալ փոփոխակի իրարու կարօտ և հաւասարապէս ուշադիրք հասարակաց բարւոյն։

Եւ որպէս զի ժողովրդոց վարիչներն իրենց տուեալ իշխանութիւնը չինելու և ոչ թէ քակելու գործածեն, Քրիստոսի եկեղեցին չատ պատշաճապէս կ'իմացընէ որ իշխանաց վրայ ալ գերագոյն Դատաւորի մը խստութիւնն կը հսկէ. և աստուածեղէն իմաստութեան խօսքով յանուն Աստուծոյ կը քարոզէ ամենուն. Ունկն դիր որ ուսիր զբազմոտքիւն, և պերձացեալդ էք 'ի վերայ ամբոխից ազգաց։ Ջի 'ի Տեառնէ տուաւ ձեզ իշխանութիւնդ և հարստութիւն 'ի բարձրելոյն, որ պահանջեսցէ զգործս ձեր, և քննեսցէ զխորհուրդս.... Ջի դատաստան անաչառ իշխանաց չիւնի... զի ոչ առնու ակն ամենեցուն Տէրն, և ոչ խորշի 'ի մեծութենէ. զի զմեծ և զփոքր ինքն արար, և զմի օրինակ խնամ ունի ամենեցուն. բայց 'ի վերայ զօրաւորացդ՝ զօրաւոր քննութիւն հառանիէ [2]։ Բայց եթէ հանդիպի իսկ երբեմն որ իշխանք անկանոնաբար և առանց խղճի վարեն զհասարակութիւնը՝ կաթողիկէ եկեղեցւոյ վարդապետութիւնն չի ներեր որ ըստ կամս անոնց դէմ ապստամբութիւն ըլլուի. որպէս զի բարեկարգութեան խաղաղութիւնն օր ըստ օրէ չխռովի, և անով ընկերութիւնն աւելի ջնաս չ'կրէ։ Եւ եթէ իրն այն աստիճանի հասնի որ փրկութեան ուրիշ յոյս չտեսնուի, կը պատուիրէ քրիստոնէական համբերութեան արդեամբք և անդադար առ Աստուած աղօթքով դարմանը հոգալ։ — իսկ եթէ օրէնսդրաց և իշխանաց վճիռներն՝ աստուածային կամ բնական օրինաց դէմ բան մը հաստատեն կամ հրամայեն, քրիստոնեայ անուան պատիւն և պարտքն ինչպէս նաև Առաքելոյն պատուէրն կը համոզեն զնոսա՝ որ Հնազանդիլ չպարտ է Աստուծոյ առաւել քան մարդկան [3]։

Գերդաստանի ընկերութիւնն ալ որ ամենայն քաղաքականութեան և թագաւորութեան սկիզբն է՝ կը զգայ և կը վայելէ 'ի հարկէ եկեղեցւոյ փրկարար զօրութիւնը, որ քաղաքական ընկերութեան կանոնաւոր ընթացք և պահպանութիւն կը պարգևէ։ Արդ գիտէք, եղբարք պատուականք, որ ըստ պարտուց բնական օրինաց այս ընտանեկան ընկերութեան ուղիղ կարգաւորութիւնս նախ նապէս առն և կնոջ անքակտելի միութեան վրայ հաստատեալ է. որուն իբրև լը-

1 Նայ. ԺԳ. 5-8։ 2 Իմաստ. Սոզ. Զ. 2-9. 3 Գործք. Ե. 28։

digitised by A.R.A.R.@

բուհն են Ծնողաց և որդւոց, տերանց և Ծառայից մէջ եղած փոխադարձ պարտքն։ Գիտէք նաև որ Ընկերավարութեան Լանիւք այս կարգս դրեթէ Ընդհանրել վրայ է. վասն զի ընտանեկան ընկերութիւնն՝ կրօնական ամուսնութենէն ընդունած հաստատութիւնը կորնչըլնելով, պէտք է որ հօր որդւոյն վրայ ունեցած իշխանութիւնն և մանաւանդ որդւոց նկատմամբ առ Ծնողս ունեցած պարտաւորութիւններն եղծանին. ընդ հակառակն՝ ամեւնին (ըստ լատ. չամեւնահի) պատուական ամուսնութիւնն [1] զոր Ի սկզբանէ աշխարհի մարդկային ազգն աճեցընելու և պահելու համար Աստուած ինքնին հաստատեց և անխզելի որոշեց, Եկեղեցին կը տօրվեցընէ թէ Քրիստոս աւելի ամրապնդեց և աւելի սրբացուց զայն խորհրդոց կարգն անցընելով. և ուզեց որ իրեն Եկեղեցւոյ հետ միութեանն նշանակ ըլլայ։ Որով՝ ըստ Առաքելոյն ըսածին [2], ինչպէս որ Քրիստոս գլուխ է Եկեղեցւոյ, այսպէս և մարդ գլուխ է կնոջ. և ինչպէս որ Եկեղեցին հպատակ է Քրիստոսի, որ յաւիտենական և սուրբ սիրով կը գգուէ զայն, այսպէս պէտք է որ կանայք իրենց ամուսնացն հպատակ ըլլան և հնազանդին ու հաւատարիմ սիրով սիրեն զիրեարս։

Նմանապէս Եկեղեցին հարց և տերանց իշխանութիւնը կը կանոնաւորէ, որպէս զի զորդիս և զծառայս իրենց պարտուց մէջ պահելու գործածեն, և չափազանցութեան չերթան։ Վասն զի ըստ կաթողիկէ վարդապետութեան, Ցեսուն մերոյ և երկնաւոր Հօր իշխանութիւնն է որ կը փոխանցի Ծնողաց և տերանց. և այս իշխանութիւնս ոչ միայն իրմէ պէտք է ընդունի իր սկիզբն և զօրութիւնը, այլ նաև իր բնութիւնն և կնիքը։ Ուստի Առաքեալն այսպէս կը յորդորէ զորդիս. Որդիք, հնազանդ չերուք ծնողաց ձերոց Ի Տէր, զի այն է արժանին։ Պատուեա զհայր քո և զմայր, որ է առաջին պատուիրան յաւետիսն [3]։ Եւ Ծնողաց կը պատուիրէ. Հարք, մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր, այլ սնուցանիջիք զնոսա խրատու և ուսմամբ Տեառն [4]։ Եւ դարձեալ, Առաքելոյն բերնով աստուածային պատուէրը կը յիշեցընէ Ծառայից և տերանց. որպէս զի առաջիններն հնազանդին տերանց մարմնաւորաց իբրև Քրիստոսի... սրտի մտօք ծառայելով իբրև Տեառն [5], իսկ վերջիններուն կ'ըսէ. Ներելով առնել զպատուհասն, գիտասչիք՝ թէ և նոցա և ձեր Տէր գոյ յերկինս, և ակնառութիւն ոչ գոյ առաջի նորա [6]։ Եթէ այս ամեն բաներս իւրաքանչիւր ոք ըստ իրեն պատշաճելուն խնամքով կատարէր, անտարակոյս ամենայն դէրդաստան երկնաւոր տան պատկերը պիտի ներկայացընէր, և անկէ յառաջ եկած անդին բարիքն միայն տնական անձուկ պատերուն մէջ չէին փակուեր, հապա նոյն իսկ ՏԷրութեանց մէջ առատօրէն կը սփռուէին։

Կաթողիկէ Իմաստութիւնն դարձեալ՝ աստուածային և բնական օրինաց վրայ յեցեալ, պանդխտացած փոյթ ունեցած է հասարակաց և ներքին խաղաղութեան, վարդապետելովն և տրվեցընելով տեսկականութեան իրաւունքն և ընչից բաժանմունքն, որք կենաց հարկին և օգտին համար եղած են։ Վասն զի մինչդեռ

1 Գործք. Ե. 29։ 3 Եփես. Ե. 23։ 5 Նոյն ԺԳ. 5–7։
2 Նբր. ԺԲ. 4։ 4 Եփ. Զ, 1–4։ 6 Նոյն ԺԳ. 9։

digitised by A.R.A.R.@

ընկերավարք ըսպասկանութիւն՝ մարդկային գիւտ մը, և՝ ի բնէ մարդկանց հաստատութեան հակառակ կը դատին, և ընչից բաժանորդութեան փափաքելով կը յանդգնին ըսել՝ թէ աղքատութեան պէտք չէ սիրով տանիլ, և թէ կարելի է համաձայնակ հարուստներուն յատուկ ստացուածքն և իրաւունքը յափշտակել, նկեղեցին չատ խոհականութեամբ և պատշաճապէս ընչից սեպհականութեան նկատմամբ անհատատարութիւն կը ճանչնայ մարդկանց մէջ, որք մ՚ընդհակ և հանճարոյ զօրութեամբ՝ ի բնէ տարբեր են մէկմէկէ. և կը հրամայէ որ՝ ի բնութենէ յառաջ եկած սեպհականութեան և իշխանութեան իրաւունքն ամենքն յարգեն և անխախտ պահեն. վասն զի գիտէ թէ գողութիւնն և յափշտակութիւնն այն աստիճան արգիլեալ է Աստուծմէ, որ է հեղինակ և վրէժխնդիր ամենայն իրաւանց, մինչև ներելի չէ և փափաքելն իսկ ուրիշներուն ընչից, և չնացողաց ու կռապաշտից նման՝ գողերն և յափշտակողներն ալ զրկուած են երկնից արքայութենէն։

Բայց ասով զաղքատներն անխնամ չի թողուր, կամ չանհոգանար մեյրն գործակից՝ անոնց պիտոյքը ճարելու. այլ մանաւանդ մեյրենի սիրովն գգուելով զանոնք, և գիտնալով որ ընոյն ինքն Քրիստոս կը ներկայացընէն, որ առ ամենա նուաստ աղքատն եղած որ և իցէ բարերարութիւնն՝ իբրև իրեն եղած կը համարի, մեծապէս կը պատուէ զանոնք, ամենայն կարելի նպաստիւք կ՚օգնէ, կը ջանայ որ ամէն տեղ զանոնք ժողովելու, կերակրելու և հիւանդութիւններին նայելու համար տուներ և հիւրանոցներ կանգնուին, զորս իր թևոց պաշտպանութեան ներքև կ՚ընդունի։ Եւ հարուստներուն ալ խստիւ կը պատուիրէ որ իրենց աւելորդն աղքատաց բաշխեն, և աստուածային դատաստանով կը սպառնայ ամենոց, յորում յատիտենական տանջանաց պիտի դատապարտուին եթէ աղքատաց խեղճութեան ձեռնտու չըլլան։ Վերջապէս մեծապէս կը մխիթարէ աղքատաց ոգիքը, թէ Քրիստոսի օրինակն առջևնին դնելով, որ վասն մեր աղքատացաւ՝ որ մեծատունն էր[1], և թէ իրեն ըսածներըը քարոզելով, որոնցմով երանի տուաւ աղքատաց և յատիտենական երանութեան վարձուց յոյսը տուաւ։

Ո՛վ չի տեսներ թէ այս է գերազանց կարգադրութիւն աղքատաց և հարուստներուն մէջ եղած ամենահին անհամաձայնութիւնը մեղմելու։ Վասն զի ինչպէս որ՝ ի գործոց և յիւրաց յայտնի կը տեսնուի, եթէ այս կարգադրութիւնս՝ ի բաց թողուի կամ արհամարհուի, հարկաւ այս երկուքէն մէկը պիտի հանդիպի, այսինքն՝ կամ մարդկային ազգին մեծագոյն մասն գերութեան ամբարշտի ծոյն տակ պէտք է որ ինկնայ, յորում երկայն ատեն կեցաւ հեթանոս ազգաց ժամանակ, կամ մարդկային ընկերութիւնն չարունակ խռովութիւններով գրգռուի, յափշտակութիւններով և գողութիւններով աւերի՝ ինչպէս որ մեծ ժամանակներս ալ դժբաղդաբար պատահեցան։

Այս պատճառաւ, եղբարք պատուականք, Մենք՝ առ որ ներկայացէս յանձնուած է բովանդակ եկեղեցւոյ վարչութիւնն, ինչպէս որ Մեր Քահանայապետութեան սկիզբէն՝ մեծ միրկէ քաղկոծեալ ժողովրդոյ և իշխանաց պատապա-

1 Բ. Կոր. Ը. 9։

digitised by A.R.A.R.@

բուելու ամենաապահով նաւահանգիստը ցուցինք, նոյնպէս հիմա ալ յետին մնաց-
լուտ վտանգէն չարժած դարձեալ կը բարձրացընենք առ այնս առաքելական ձայ-
ներնիս, և իրենց և Պետութեանց փրկութեան համար կրկին կրկին թախան-
ձանօք կը խնդրենք, որ թագաւորութեանց առ հասարակ զարգացման այնչափ
օգտակար եղող եկեղեցին՝ իբրև ուսուցիչ ընդունին և ունկնդիր ըլլան. և համ-
ղուին որ թագաւորութեան և կրօնից պարագաներն այնպէս կապակցեալ են
մէկմէկու հետ, որ որչափ այս վերջինս 'ի բաց թողուի՝ այնչափ հպատակաց պարտքն
և իշխանութեան պատիւն զանց կ'ըլլուի: եւ հասկնալով որ Ընկերակցութեան
ժամտախտը հալածելու համար եկեղեցին այնչափ զօրութիւն ունի, որուն նման
ոչ մարդկային օրինաց, ոչ դատաւորաց պատժոյ և ոչ բանակաց սուերուն մէջ
կը գտնուի, ուր ուրեմն այնպիսի պայմանի և ազատութեան մէջ թողուն զնոյն
եղեցին՝ որ կարենայ 'ի գործ դնել իր փրկարար զօրութիւնն 'ի նպաստ բովանդակ
մարդկային ցեղին:

Դուք ալ, եղբարք պատուականք, որ վերահաս չարեաց ծագումն և բնու-
թիւնը կը ճանչնաք՝ ամենայն ոգւոյ պնդութեամբ և ամենայն ճգամբ աշխատե-
ցէք՝ որպէս զի ուղղափառ վարդապետութիւնն ամենուն սրտին մէջ թափանցէ
և արմատանայ: Քանզի եթէ ամենքն մատաղ հասակէն վարժին սիրել զՔս-
տուած որդիական սիրով՝ և իր անունը պատուել. իշխանաց պատուոյն և օրինաց
յարգանք ընծայել, փափաքներն չափաւորել, և թէ քաղաքային և թէ ներքին
ընկերութեան մէջ Աստուծոյ դրած կարգաց մեծ փութով ուշադիր ըլլան: Ասկէ
զատ պէտք է խնամք ունենանք որ ամենևին կաթողիկէ եկեղեցւոյ որդիքն որ և իցէ
կերպով չհամարձակին այս պժգալի աղանդիս ոչ անունը տալ և ոչ մասնակից
ըլլալ. այլ մանաւանդ փառաւոր գործերով և բարի վարուք ցուցընեն թէ ինչպէս
մարդկային ընկերութիւնն աղէկ և երջանիկ կերպով պիտի յառաջադիմէր, եթէ
անոր ամեն անդամներն ալ բարի գործերով առաքինի հանդիսանային:

Ի վերջոյ՝ Ընկերակարութեան հետևողքն գլխաւորապէս մարդկանց այն դա-
սին մէջ գտնուելով որ արուեստից և ծառայութեան հետամուտ են, և աշխա-
տութեամբ բեռնաւորեալ՝ հարստութեան յուսով և ընչից խոստմամբ դիւրաս
կը ձգուին, շատ պատչաճ կ'երևի արուեստաւորաց և գործաւորաց ընկերու-
թիւնները զարգացընել, որոնք կրօնից պաշտպանութեան տակ կազմուելով՝ ըն-
կերութեան ամեն անդամներն իրենց վիճակին վրայ գոհ կ'ըլլան, և համթերու-
թեամբ աշխատելով խաղաղ և հանդիստ կեանք մը կ'անցընեն:

Մեր և ձեր դիտաւորութեանց օգնական ըլլայ Ան՝ որուն պէտք է ընծայենք
ամենայն բարեաց սկիզբն և կատարածը: Միւս կողմանէ ամենապատրաստ օգ-
նականութեան մը ակնկալութիւն կու տան մեզի այս օրերս, յորս Քրիստոսի
Ջննդեան հանդիսաւոր տարեդարձը կը տօնախմբուի: վասն զի Քիստոս Քրիստոս
կը հրամայէ մեզի այն նոր փրկութեան յաւետ՝ զոր իր Ծննդեամբն՝ արդէն հնա-
ցեալ և գրեթէ 'ի խորս չարեաց կործանեալ աշխարհքիս մէջ բերաւ. և խոստա-
ցաւ մեզի ալ տալու այն խաղաղութիւնը՝ զոր հրեշտակաց ձեռքով կ'աւետէր
մարդկանց: Ոյսվհետև մեզի ո՞չ իցէ կարող ձեռն Ցեսուսի փրկել, կամ ցան-

digitised by • A.R.A.R.@

բացո՛յց ինչ զուարկն իւր՝ զի մի յոյիցէ[1]։ Ուրեմն այսպիսի ցնծութեան օրերուս մէջ մաղթելով Ջեզի, եղբարը պատուականը, և ձեր եկեղեցեաց հաւատացելոց ամենայն յաջողութիւն և ուրախութիւն, ամենայն բարեաց Տուողէն եռանդագին կը խնդրենք որ գաթձեալ փրկչին մերոյ Աստուծոյ քաղցրութիւնն և մարդասիրութիւնն յայտնուի. որ զմեզ վայրագ թշնամւոյն իչխանութենէն ազատելով որդիութեան աղնուագոյն աստիճանին արժանացուց։

Եւ որպէս զի աւելի չուտ և ամբողջապէս կատարուին մեր փափաքներն, Մեզի հետ, եղբարը պատուականը, յերմեռանդն աղօթեցէք առ Աստուած, միջնորդ բռնելով զպաշտպանութիւն Ընարատ երանուհւոյ կուսին Մարիամու, իր փեսային Յովսեփայ և երանելի Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, որոնց բարեխօսութեան վրայ մեծապէս վստահ ենք։

Վասն որոյ անկեղծ սիրով սրտի յանուն Աստուծոյ կը բաչխենք առ Ջեզ, եղբարը պատուականը, առ ձեր կղերն և բոլոր ձեր ժողովրդոց Առաքելական օրհնութիւնը՝ ի գրաւ աստուածային պարգեաց։

Տուեալ ի Հռոմ, ի Ս. Պետրոս. 28 Դեկտեմբեր, 1878։

Մեր Քահանայապետութեան Ա. տարին։

ԼԵՒՈՆ ԺԳ. ՓԱՊԱՆՑԱՑՑ։

1 Նա. ՅԹ. 1։

digitised by A.R.A.R.@